

## ԳԻՏԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՓՈԽՆԱՐԱՎԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

### Ս. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գիտական հետազոտության գործընթացը բարդ է ու բազմակողմանի և իրականացվում է որոշակի մեթոդների օգնությամբ: Յուրաքանչյուր մեթոդ օգտագործվում է խնդիրների որոշակի շրջանակի լուծման համար, այսինքն՝ մեթոդի գործառնական հնարավորությունները քիչ թե շատ հստակ սահմանված են: Յուրաքանչյուր կոնկրետ խնդրի լուծման դեպքում գործ ունենք «մեթոդների ընտրության հետ», որոնք կախված են «հնարավոր նպատակների որոշակի բազմությունից» մեր կատարած ընտրությունից<sup>1</sup>: Ուստի, գիտական հետազոտության ժամանակ մեթոդի հնարավորությունները պետք է որոշակիորեն սահմանված լինեն: Սակայն այդպիսի սահմանաբաժան գծի անցկացումը բնավ էլ չի ենթադրում տարբեր մեթոդների միմյանց հակադրում: Մինչդեռ ժամանակակից մեթոդաբանական գրականության մեջ պարադիգմա է դարձել գիտական բացատրության և հասկացման մեթոդների հակադրումը, որը, ըստ երևույթին, բխում է գիտելիքի բնագիտական և հումանիտար բնագավառների պատմականորեն ձևավորված հակադրությունից:

Գիտական բացատրության և հասկացման մեթոդների դիստոմիայի սկզբունքն առաջինը ներմուծել է գերմանացի պատմաբան և փիլիսոփա Դրոյզենը<sup>2</sup>, որից հետո այն իր զարգացումն է գտել ժամանակակից փիլիսոփայության մեջ արտահայտված պոզիտիվիստական և հակապոզիտիվիստական մոտեցումներում: Պոզիտիվիզմը, ելնելով մեթոդաբանական մոնիզմի դիրքերից, գտնում է, որ գիտության նպատակը երևույթներին բացատրություն տալը և նոր երևույթների կանխատեսումն է: Իսկ հակապոզիտիվիստական մոտեցումները մեթոդի հարցում առավել ցայտուն արտահայտված են հերմենևտիկական փիլիսոփայության մեջ, որին թեև հատուկ է մեթոդաբանական պլուրալիզմը, բայց այն տեսակետը, որ տեքստերի հասկացումը հումանիտար գիտելիքի համընդհանուր մեթոդն է, իսկ մեկնաբանությունը՝ «հասկացման էքսպլիցիտ ձևը», ըստ երևույթին, հատուկ է բոլոր հերմենևտիկ փիլիսոփաներին: Սակայն հասկացումն ունի ընդգծված հոգեբանական երանգավորում և, իբրև այդպիսին, նույնքան հատկանշական է բացատրության, որքան մեկնաբանության համար: Ավելին, «մեկնաբանությունը և հասկացումը բնագիտության մեջ իրենց բնորոշ հիմնական գծերով սկզբունքորեն չեն տարբերվում մեկնաբանությունից և հասկացումից հումանիտար և հասարակական գիտություններում»<sup>3</sup>: Հետևաբար, գիտական բացատրության և մեկնաբանության մեթոդների փոխհարաբերության հարցն այժմ չպետք է քննարկվի բնագիտական և հումանիտար գիտելիքների հակադրության համատեքստում, այլ ավելի շուտ որպես ելակետ պետք է ընդունվեն մեթոդի գործառնական հնարավորություններն իրենց էպիստեմոլոգիական նշանակության տեսակետից:

Մեկնաբանության մեթոդին առնչվող հիմնահարցերը սովորաբար քննարկվում են երկու մակարդակում՝ 1) օբյեկտիվ իրականության իրերի և երևույթների

1 Տե՛ս Կ. Ս. Պոպեր, *Логика и рост научного знания*, М., 1983, էջ 73:

2 Տե՛ս Գ. Խ. фон Вригт, *Логико-философские исследования*, М., 1986, էջ 44:

3 Գ. Ի. Рузавин. *Проблема понимания и герменевтика*. В сб.: *Герменевтика: история и современность*. М., 1985, с. 164.

մեկնաբանություն, 2) տեքստերի մեկնաբանություն: Սակայն, քանի որ տեքստերում արտացոլված են օբյեկտիվ իրականության իրերն ու երևույթները, դրանց միջև գոյություն ունեցող կապերն ու հարաբերությունները, երբեմն տեքստերի մեկնաբանության մասին խոսում են որպես մեկնաբանության մեկնաբանության: Նկատի ունենալով գիտական բացատրության հիմնահարցով զբաղվող շատ փիլիսոփաների կողմից մեկնաբանություններն առաջին մակարդակում բացատրություն՝ համարելու փաստը և, առավել ևս, մեկնաբանության մեկնաբանությունից բխող էպիստեմոլոգիական հարցադրումների տարբերությունը մեկնաբանությունից՝ տեքստերի մեկնաբանության հիմնահարցին այս հոդվածում չենք անդրադառնա և մեկնաբանություն ասելով նկատի կունենանք մեկնաբանություններն առաջին մակարդակում:

Մեկնաբանության մեթոդը գիտական բացատրություն համարելու կամ, ավելի ճիշտ, գիտական բացատրության հետ շփոթելու պատճառը, թերևս, նրանց տրամաբանական կառուցվածքի որոշ նմանությունն է: Գիտական բացատրության նման մեկնաբանությունն իրենից ներկայացնում է դեդուկտիվ մտահանգում, որում միտքը ներկայից շարժվում է դեպի անցյալ՝ փորձելով անցյալի իրադարձություններում գտնել ներկայի առաջացման պատճառներն ու հիմքերը, գեներտիկ կապ հաստատել ներկայի և անցյալի միջև՝ անցյալից ներկայի բխեցման ճանապարհով: Ըստ այդմ, մտահանգման նախադրյալներն անվանվում են էքսպլանանս (բացատրող), իսկ եզրակացությունը, որում ներկայացված է բացատրության ենթակա երևույթը, էքսպլանանդում: Սակայն գիտական բացատրության և մեկնաբանության մեթոդներն իրարից տարբերվում են էքսպլանանսի և էքսպլանանդումի միջև գոյություն ունեցող տրամաբանական կապի բնույթով. գիտական բացատրության էքսպլանանսում արտահայտված են էքսպլանանդումի գոյության թե բավարար, թե անհրաժեշտ պայմանները, իսկ մեկնաբանության էքսպլանանդ լավագույն դեպքում պարունակում է էքսպլանանդումի գոյության անհրաժեշտ պայմանները միայն (ոչ լրիվ էքսպլանանս), իսկ այն դեպքում, երբ էքսպլանանսում առկա են մոտիվացիոն անդումներ, էքսպլանանդումների և էքսպլանանսների միջև տրամաբանական կապը, որպես այդպիսին, ընդհանրապես բացակայում է՝ այդ պատճառով հնարավոր է դառնում միևնույն երևույթի վերաբերյալ տարբեր մեկնաբանությունների գոյությունը:

Գիտական բացատրության էքսպլանանսը բաղկացած է երկու բաղադրիչներից, որոնցից մեկը էքսպլանանդումին նախորդող պայմանները ներկայացնող դրույթներն են, իսկ մյուսը՝ գիտության ընդհանուր օրենքները, որոնք տրամաբանական տեսակետից կարելի է ներկայացնել  $(x)(Px \supset Qx)$  տեսքով, իսկ ամբողջ բացատրությունը կստանա հետևյալ տեսքը.

$$1) (x)(Px \supset Qx);$$

$$2) Pa;$$

$$3) Qa,$$

որտեղ առաջին պնդումը ընդհանուր օրենքն է, որը կարող է կիրառվել ցանկացած օբյեկտի նկատմամբ, երկրորդը հաստատում է, որ մասնավոր  $a$  օբյեկտն ունի  $P$  հատկություն: Այս երկու պնդումները միասին հնարավորություն են տալիս դեդուկտիվ եղանակով տրամաբանորեն բխեցնել երրորդ պնդումը, որ մասնավոր  $a$  օբյեկտն ունի  $Q$  հատկություն<sup>4</sup>: Այսպիսով, գիտական բացատրությունը ներկայանում է ապացուցողական սիլլոգիզմի տեսքով, և, հետևաբար, «գիտական

<sup>4</sup> Տե՛ս Ա. Վ. Վարդանյան, Մեկնաբանության մեթոդի տրամաբանական հիմնավորումը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2002, № 3, էջ 16-21:

<sup>5</sup> Տե՛ս **Р. Карнап**, *Философские основания физики*, М., 1971, էջ 45:

բացատրության տրամաբանական կողմը ապացուցումն է՝: Իսկ մեկնաբանության դեպքում ոչ լրիվ էքսպլանանսն առաջանում է էքսպլանանսի կազմի մեջ մտնող երկու բաղադրիչներից որևէ մեկի թերարժեքության պատճառով՝ 1) երբ գիտության օրենքը կամ ընդհանուր կարգավորվածությունն արտահայտող դատողությունը բացակայում է կամ լռելյայն ենթադրվում է, 2) երբ օրենքն առկա է, իսկ նախորդող իրավիճակների նկարագրությունը լրիվ չէ:

1. Թե գիտության մեջ, թե առօրյա կյանքում ընդհանուր օրենքը ոչ միշտ է ակնհայտորեն ահմանվում: Օրինակ, կարելի է ֆիզիկոսին հարցնել, թե ինչու մետաղական ձողը, որը մեկ թույն առաջ համապատասխանում էր սարքին, այժմ չի համապատասխանում: Պատասխանը կարող է լինել այն, որ ձողը տաքացվել է: Այդպիսի պատասխան տալով ֆիզիկոսը ենթադրում է, որ խոսակիցը գիտի մարմինների ջերմային ընդարձակման օրենքը, այդ պատճառով նա կարող է օրենքի ձևակերպումը բաց թողնել, ինչը հաճախ արվում է առօրյա կամ ոչ գիտական բացատրության ժամանակ: Սակայն այդ դեպքում կարող է թվալ, որ էքսպլանանսը պարունակում է միայն դատողություններ նախորդող իրավիճակների մասին, այսինքն՝ հանդես է գալիս որպես նկարագրություն: Այս հանգամանքը հաճախ մեթոդաբաններին հիմք է տալիս պնդելու, որ գիտական բացատրությունը և նկարագրությունը միևնույն բանն են, որ նկարագրությունը նույնպես բացատրություն է կամ բացատրության տարատեսակ: Մինչդեռ նկարագրությունը և բացատրությունը խիստ տարբեր են թե՛ իմացաբանական, թե՛ տրամաբանական տեսակետից: Նկարագրությունը զգայական փորձի արդյունքների ամրագրումն է լեզվական արտահայտությունների միջոցով, այդ պատճառով վերաբերում է գիտելիքի էմպիրիկ մակարդակին: Ի տարբերություն գիտական բացատրության, այն իր առջև օբյեկտների էության բացահայտման, դրանց միջև օրինաչափ, անհրաժեշտ կապերի հաստատման խնդիր չի դնում: Բացի այդ, իր տրամաբանական կառուցվածքով ևս այն խիստ տարբերվում է գիտական բացատրությունից: Տրամաբանական առումով այն հոմոգեն է, քանի որ նրա տարրերը՝ փաստերը, տրամաբանական տեսակետից հարաբերականորեն հավասարազոր են և համարժեք՝, ուստի հնարավոր չէ դրանք դեդուկտիվ եղանակով բխեցնել մեկը մյուսից: Հետևաբար, օրենքների բացակայությունը էքսպլանանսում դեռ չի նշանակում, որ գործ ունենք նկարագրության հետ:

Մյուս կողմից, նախորդող իրավիճակների մասին դատողություններից էքսպլանանդումի բխեցումն առանց ընդհանուր օրենքների մասնակցության մտահանգմանը տալիս է էնտիմենայի տեսք, իսկ էնտիմենան «սիլլոգիզմ է հավանականից» կամ «ճշմարտանման նախադրյալից»<sup>10</sup>, որի եզրակացության հավաստիության մասին կարելի է խոսել միայն այն բանից հետո, երբ բացակայող նախադրյալը՝ գիտության օրենքը, վերականգնվել է: Իսկ մինչ այդ գիտական բացատրություն համարել այն նույնպես չի կարելի, քանի որ զուրկ է գիտական բացատրությանը հատուկ ապացուցողականությունից: Իրավիճակն ավելի բարդ է այն դեպքում, երբ գործ ունենք առանձնահատուկ, եզակի և անկրկնելի փաստերի բացատրության հետ, որովհետև «առանձնահատուկ փաստի բացատրությունը բախվում է լուրջ իմացաբանական դժվարության հետ՝ իմացաբանական առումով տարբեր մակարդակների վրա գտնվող դրույթները՝ առանձնահատուկ փաստը (էքսպլանանդում – ծնթ. իմն է - Ս. Վ.) և էքսպլանանսի մեջ մտնող գիտության

<sup>6</sup> М. Бунге. Причинность. М., 1962, с. 328.

<sup>7</sup> Տե՛ս Р. Карнап, նշվ. աշխ., էջ 45:

<sup>8</sup> Տե՛ս М. Бунге, նշվ. աշխ., էջ 339:

<sup>9</sup> Տե՛ս Е. П. Никитин, Объяснение - функция науки, М., 1970, էջ 204-205:

<sup>10</sup> Տե՛ս Аристотель, Аналитики, Сочинения, т. 2, М., 1978, էջ 252:

օրենքը համաձայնեցնելու անհրաժեշտության հետ»<sup>11</sup>: Քանի որ այդ դժվարության հաղթահարումը երբեմն անհնար է լինում (ինչպես, օրինակ, պատմական ուսումնասիրությունների ժամանակ) համապատասխան ընդհանուր օրենքներ չգտնելու պատճառով, ապա դարձյալ ստացվում է էնտիմենայի տիպի մտահանգում, որի էքսպլանանում տրված են էքսպլանանդումի բխեցման անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանները, ինչը բնորոշ է ոչ թե գիտական բացատրության, այլ մեկնաբանության մեթոդին:

2. Երբ էքսպլանանսը պարունակում է ընդհանուր օրենքներ, իսկ նախորդող իրավիճակների նկարագրությունը լրիվ չէ, ապա այս դեպքում ևս էքսպլանանսում տրված են էքսպլանանդումի առաջացման միայն անհրաժեշտ պայմանները, և գիտական տեսակետից դա բացատրություն համարել չի կարելի: Օրինակ, եթե մետաղե ձողը իջեցված է ջրով լի բաժակի մեջ այնպես, որ նրա մի մասը գտնվում է ջրում, իսկ մյուս մասը՝ օդում, ապա այն մեզ ծոված կթվա: Եթե մեզ հայտնի է միայն ռեֆրակցիայի (լույսի բեկման) օրենքը, ապա օրենքն ինքն իրենով երևույթի բացատրությունը չի կարող լինել, եթե նախորդող իրավիճակների նկարագրությունը՝ այն, որ ձողը ուղիղ է եղել մինչև ջրի մեջ ընկղմելը, և որ այն ջրի մեջ լրիվ չի ընկղմված, այլ կիսով չափ, մեզ հայտնի չէ: Եթե այդ նախապայմաններից որևէ մեկը բացակայում է, եթե նախապես հայտնի չէ, որ ձողը կիսով չափ գտնվում է ջրում, իսկ կիսով չափ՝ օդում, ապա կարող ենք ենթադրել, որ ձողն ուղիղ չէ, այսինքն՝ երևույթը կստանա լրիվ այլ մեկնաբանություն: Մյուս նախապայմանի բացակայությունը կարող է հանգեցնել երևույթի նույնպիսի մեկնաբանության: Տրամաբանական տեսակետից դարձյալ ստացվում է մտահանգում, որի նախադրյալներից մեկը լիարժեք չէ, ուստի ունի հավանական բնույթ: Այդ պատճառով մտահանգումը դարձյալ ձեռք կբերի էնտիմենային բնույթ:

Էքսպլանանսում մոտիվացիոն դրույթներ պարունակող մեկնաբանություններն իրենց տրամաբանական կառուցվածքով նույնպես տարբերվում են ապացուցողական սիլլոգիզմից: Ֆինն հայտնի տրամաբան Գ. Հ. Ֆոն Վրիգտը, որպես մոտիվացիոն հիմք ունեցող մտահանգում, առաջարկում է կիրառել դեռևս Արիստոտելից եկող և «պրակտիկ սիլլոգիզմ» կոչվող մտահանգումը, որի մեծ նախադրյալը բովանդակում է ինչ-որ ցանկալի բան կամ գործողության նպատակ, փոքր նախադրյալում ինչ-որ գործողություն կապվում է ցանկալի արդյունքի հետ՝ որպես դրան հասնելու միջոց, և, վերջապես, եզրակացության մեջ ասվում է միջոցի օգտագործման մասին՝ նպատակին հասնելու համար: Բայց եթե տեսական եզրակացության մեջ նախադրյալների հաստատումը անհրաժեշտորեն բերում է եզրակացության հաստատմանը, ապա պրակտիկ եզրակացության մեջ նախադրյալների հետ միայն համաձայնությունն արդեն մղում է համապատասխան գործողությանը<sup>12</sup>: Օրինակ, եթե պրակտիկ եզրակացության նախադրյալներից մեկն ասում է, որ երեխան խաղալիքն է ուզում, իսկ երկրորդը, որ երեխան լաց է լինում, որպեսզի ստանա այն, կարելի է եզրակացնել, որ երեխան լաց է լինում, որովհետև ուզում է խաղալիքը: Բայց երեխայի լացի պատճառը, այսինքն այն նպատակը, որ հետապնդում էր երեխայի լացը, պարզ է դառնում ռետրոսպեկտիվ ձևով, միայն այն բանից հետո, երբ արդեն գործողությունը կատարված է, այսինքն՝ երբ երեխան, խաղալիքն ստանալով, դադարեցրել է լացը: Իսկ մինչ այդ մնում է միայն մեկնաբանել երեխայի լացի պատճառը, որը կարող էր լրիվ այլ նպատակ հետապնդել և համապատասխանաբար այլ մեկնաբանություն ստանալ<sup>13</sup>:

Հետևաբար, «պրակտիկ սիլլոգիզմ»-ում էքսպլանանդումները և էքսպլանանանները միմյանց հետ կապվում են ոչ թե ընդհանուր օրենքների, այլ պրակտիկ

<sup>11</sup> Е. П. Никитин, *ՈՂԿ.* աշխ., էջ 204-205:

<sup>12</sup> Տե՛ս Գ. X. фон Вригт, *ՈՂԿ.* աշխ., էջ 64:

<sup>13</sup> Տե՛ս Ս. Վ. Վարդանյան, *ՈՂԿ.* աշխ., էջ 19:

եզրակացության մասնադրյալները կազմող սինգուլյար ասույթների ամբողջության միջոցով, այդ պատճառով տրամաբանական տեսակետից դրանք միմյանցից անկախ են, ուստի էքսպլանանտում արտահայտված չեն էքսպլանանդումի գոյության ո՛չ բավարար, ո՛չ անհրաժեշտ պայմանները: Չնայած դրան՝ «պրակտիկ սիլլոգիզմ»-ը նույնպես կարող է ստանալ էնտիմենտայի տեսք: Հաճախ, հատկապես պատմական ուսումնասիրությունների ժամանակ, եզրակացությունը, որը մասնադրյալներում ձևակերպված մոտիվացիոն հիմքից է բխում, ոչ թե ինքը էքսպլանանդումն է, այլ ինչ-որ միջանկյալ իրադարձություն կամ գործողություն, որը այլ պրակտիկ եզրակացության մոտիվացիոն հիմքի մեջ է մտնում այլ միջանկյալ եզրակացությամբ, և այդպես՝ շարունակվող քայլերի շարքի միջոցով, մինչև արդյունքում ստացվում է ինքը՝ էքսպլանանդումը<sup>14</sup>:

Գիտական բացատրության և մեկնաբանության մեթոդները միմյանց հետ շփոթելու պատճառներից մեկն էլ, թերևս, թաքնված է դրանց արտահայտման լեզվական ձևի մեջ: Դրանք երկուսն էլ ունեն «P, որովհետև Q» տեսքը, այսինքն՝ տեղավորվում են պատճառական լեզվի շրջանակներում: Ընդհատ է, մոտիվացիոն դրույթ պարունակող մեկնաբանությունները, որոնք ունեն տելելոլոգիական հեռանկար, սովորաբար ունենում են «P, որպեսզի Q» տեսքը (երեխան լալիս է, որպեսզի ստանա խաղալիքը), սակայն կարելի է դրանք ևս ներկայացնել պատճառականության տերմիններով (երեխան լալիս է, որովհետև ուզում է ստանալ խաղալիքը): Այդ դեպքում դրանք կարող են դիտվել որպես մեկնաբանություններ ոչ լրիվ էքսպլանանտով:

Չնայած այն հանգամանքին, որ գիտական բացատրությունն իր պատրաստի տեսքով դեդուկտիվ եզրակացություն է, բայց իբրև գործընթաց այն իրագործվում է հակառակ ուղղությամբ՝ ինդուկտիվ եղանակով: Առաջին մոտեցման դեպքում գիտական բացատրության գործընթացում կարելի է առանձնացնել հետազոտական փուլերի հետևյալ հաջորդականությունը.

1. էքսպլանանդումի հաստատում,
2. էքսպլանանսի որոնում,
3. պատրաստի բացատրության ճշտության և ճշմարտության ստուգում<sup>15</sup>:

Գիտական բացատրության գործընթացը սկսվում է էքսպլանանդումի հաստատումից, որն ըստ էության էքսպլանանդումում արտացոլված առարկայի կամ երևույթի նկարագրությունն է, և ամենակարևոր խնդիրը, որ պետք է իրագործվի գիտական բացատրության ընթացքում, էքսպլանանսի որոնումը և հաստատումն է: Էքսպլանանսի հաստատումը բարդ և պատասխանատու գործընթաց է, որը ենթադրում է՝

ա) փաստերի որոշակի համախմբից էքսպլանանդումին հարակից կամ նման փաստերի հայտնաբերումը և ընտրությունը,

բ) ընտրված փաստերի հիման վրա այնպիսի ընդհանուր օրենքների որոնումը և հայտնաբերումը, որոնք կարող են էքսպլանանտում նկարագրված երևույթները կապել էքսպլանանդումում նկարագրված երևույթի հետ,

գ) էքսպլանանսի և էքսպլանանդումի միջև բխեցնելիության հարաբերության հաստատումը:

Բայց փաստերի ընտրությունը, որը տեղի է ունենում ինչպես հետազոտության էմպիրիկ մեթոդների (համանմանություն, ինդուկցիա և այլն), այնպես էլ ինտուիցիայի և երևակայության օգնությամբ, հաճախ արդեն որակվում է իբրև մեկնաբանություն, չնայած, մյուս կողմից, «ինքը՝ փաստերի ընտրությունը, ուղղորդվում

<sup>14</sup> Տե՛ս Գ. X. фон Вригг, Գշվ. աշխ., էջ 171:

<sup>15</sup> Տե՛ս Է. П. Никитин, Գշվ. աշխ., էջ 170:

է տեսական սկզբունքներով (օրինակ, տեղի լինելու չափանիշներով) և բացատրական բնույթի հիպոթեզներով»<sup>16</sup>: Այդպիսի տեսական սկզբունքներ կարող են համարվել երևույթների միջև կարգավորվածություն արտահայտող դրույթները (այդ թվում նաև գիտության օրենքները), որոնք համակարգում են երևույթների մասին մեր ունեցած գիտելիքը և առանց որոնք հնարավոր չէ փաստերի ճիշտ ընտրություն կատարել, իսկ փաստերի ճիշտ ընտրության մասին կարելի է խոսել այն դեպքում միայն, երբ արդեն առկա է էքսպլանանդումում ներկայացված երևույթի և այդ փաստերի միջև բխեցնելիության հարաբերություն, որը կարելի է բնութագրել որպես «բացատրական բնույթի հիպոթեզ» կամ մեկնաբանություն: Հետևաբար կարելի է ասել, որ մեկնաբանությունը՝ իբրև գիտական հետազոտության որոշակի փուլ, համընկնում է վերը նշված էքսպլանանսի որոնման փուլի հետ, ուստի գիտական բացատրությունը որպես այդպիսին որակելը կախված է նրա ճշտության և ճշմարտության ստուգումից, այսինքն՝ տրամաբանական և պրագմատիկ չափանիշներին նրա համապատասխանելիությունից, իսկ մինչ այդ այն կարող է որակվել որպես մեկնաբանություն: Այստեղից հնարավոր է եզրակացնել, որ, մի կողմից, մեկնաբանությունը նախորդում է գիտական բացատրությանը, իսկ մյուս կողմից, քանի որ մեկնաբանությունը տրամաբանական տեսակետից ոչ լրիվ բացատրություն է, «որը մատնացույց անելով նախորդող պայմանների և բացատրվող երևույթի տիպի միջև դրական կոռելյացիան, ցույց է տալիս բացատրությունը լրացնելու համար հետագա հետազոտությունների ուղղությունը»<sup>17</sup>, կարելի է ասել, որ ամեն մեկնաբանություն ատաշանում է ինչ-որ բան բացատրելու հոգեբանական պահանջից, և, թերևս, հոգեբանական այս գործոնը ևս վճռական նշանակություն ունի գիտական բացատրությունը մեկնաբանության հետ նույնացնելու գործում:

Գիտական բացատրության տրամաբանական ճշտության չափանիշ է հանդիսանում կանխատեսման հնարավորությունը: Եթե գիտական բացատրությունը կառուցված է ճիշտ, այսինքն՝ եթե նրա էքսպլանանսում արտահայտված են էքսպլանանդումի գոյության անհրաժեշտ և բավարար պայմանները, ապա կարելի է կանխատեսել ոչ միայն էքսպլանանդումում ներկայացված երևույթի երկրորդ անգամ ի հայտ գալը, այլև միանգամայն այլ՝ գիտությանն անհայտ երևույթի առաջացումը, իսկ եթե տրված են միայն անհրաժեշտ պայմանները, ինչը տեղի ունի մեկնաբանության դեպքում, ապա կանխատեսում անել հնարավոր չէ: Բացի այդ, գիտական բացատրությունն իր էքսպլանանսում պարունակում է գիտության օրենքներ, որոնք, լինելով ռացիոնալ ճանաչողության մակարդակում օբյեկտիվ օրենքների վերարտադրությունները, այնուամենայնիվ վերջինների պատճենները կամ կրկնօրինակները չեն: Ի տարբերություն օբյեկտիվ օրենքների, որոնք ենթադրում են կայունություն, գիտության օրենքները փոփոխվում, կատարելագործվում են, ինչը ցույց է տալիս, նախ, որ նրանք երբեք չեն սպառում օբյեկտիվ օրենքները<sup>18</sup>, և երկրորդ՝ որ «գիտության բոլոր օրենքները միշտ ունեն հիպոթետիկ բնույթ»<sup>19</sup> և, որպես այդպիսին, կարիք ունեն ստուգման, որի պրագմատիկ չափանիշ է ծառայում ինչպես արհեստական վերարտադրելիությունը, այնպես էլ կանխատեսելիությունը<sup>20</sup>: Հետևաբար, կանխատեսումը գիտական բացատրության ոչ միայն ճշտության, այլև ճշմարտության ստուգման չափանիշ է: Այսպիսով, գիտական բացատրության էքսպլանանսը բովանդակում է կանխատեսական հնարավորություն, որի

<sup>16</sup> М. Бунге, *ՈՉՎ. աշխ.*, էջ 340:

<sup>17</sup> C. G. Hempel, P. Oppenheim. *The Logic of Explanation. In: Readings in the Philosophy of Science.* N. Y., 1953, p. 324.

<sup>18</sup> Տե՛ս М. Бунге, *ՈՉՎ. աշխ.*, էջ 285:


<sup>19</sup> К. Поппер. *Открытое общество и его враги.* Т. 2, М., 1992, с. 435.

<sup>20</sup> Տե՛ս М. Бунге, *ՈՉՎ. աշխ.*, էջ 375:

շնորհիվ ուղղվում է դեպի ապագա՝ ձեռք բերելով Աերկա-անցյալ-Աերկա-ապագա տեսքը, իսկ մեկնաբանությունը, քանի որ կանխատեսական այդպիսի հնարավորություն չի պարունակում, ստանում է Աերկա-անցյալ-Աերկա տեսքը:

Գիտական բացատրության էքսպլանանսում կարող են պարունակվել նաև վիճակագրական օրենքներ: Այդ դեպքում ստացվում է ինդուկտիվ բացատրություն կամ, ինչպես հաճախ անվանում են, ինդուկտիվ-հավանական բացատրություն, որը հնարավորություն է տալիս անելու ոչ թե հավաստի, այլ հավանական կանխատեսում:

Ենթադրենք, որ չորս զատերի նետման դեպքում միավորների ընդհանուր քանակը 4-ից բարձր է: Դա կարող է բացատրվել հետևյալ դրույթներից ելնելով. 1) զատերից յուրաքանչյուրի համար կողմերից մեկի վրա ընկնելու հավանականությունը հավասար է նրա բոլոր մյուս կողմերի վրա ընկնելու հավանականությանը, և 2) դրանք միաժամանակ նետելու դեպքում դրանցից յուրաքանչյուրի ցույց տված միավորների քանակները վիճակագորեն անկախ են միմյանցից. այնպես որ վիճակագրական հավանականությունը, որ այդ չորս զատերի որոշակի B քանակությամբ նետումները կտան չորս M-ը գերազանցող միավորների ընդհանուր գումար, կկազմի  $p_s(M, B) = 1295/1296 \approx 0,9992\dots$  Այդ ընդհանուր հավանական դատողությունը այն ինֆորմացիայի հետ միասին, որի համաձայն չորս զատերի նետման արդյունքում տեղ է գտել ինչ-որ i իրադարձություն (կամ ավելի կարճ՝  $B_i$ ), բոլորովին էլ չի հանգեցնում այնպիսի տրամաբանական եզրակացության, որի համաձայն տվյալ կոնկրետ դեպքում միավորների գումարը բարձր կլինի 4-ից (կամ՝  $M_i$  -ից): Սակայն, այդ երկու պնդումները միասին տալիս են ինդուկտիվ հիմնավորում կամ, ինչպես ասում են, ինդուկտիվ հավանականություն՝  $M_i$ -ին սպասելու համար: Այդ տիպի բացատրության տրամաբանական բնույթը կարելի է Աերկայացնել հետևյալ սխեմայով.



Ինչպես երևում է սխեմայից, հավանականությունը, որ էքսպլանանսը տալիս է էքսպլանանդումին, վիճակագրական բնույթ չունի, այսինքն՝ այն չի արտահայտում երևույթների M և B շարքերի միջև էմպիրիկ հաստատված քանակական հարաբերությունները<sup>21</sup>: Հետևաբար, որպես նախադրյալ վերցված վիճակագրական օրենքն ինքնըստիներյան եզրակացության հավանական բնույթի բավարար պայման չէ:

Հենց այդ հանգամանքն է շեշտում գիտական բացատրության հեմպելյան մոդելի հիմնական ընդդիմախոսներից մեկը՝ Սքրիվենը: Ըստ Սքրիվենի՝ ընդհանուր օրենքների միջոցով բացատրության մեջ ուշադրության կենտրոնում է այն երևույթը, որը պետք է բացատրվի, իսկ վիճակագրական օրենքները համատեղելի են երևույթի ինչպես առաջացման, այնպես էլ չառաջացման հետ, այսինքն՝ դրանք «կորցնում են կապը առանձին դեպքերի հետ»: Այդ է պատճառը, որ վիճակագրական օրենքները, չմատնանշելով բացատրվող երևույթի առաջացման պատճառը, չեն կարող բացատրել նաև, թե ինչու տեղի ունեցավ հենց այդ երևույթը, այլ ոչ թե մեկ ուրիշը<sup>22</sup>: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ նախ՝ «ցանկացած հավանական դատողություն վիճակագրական մեկնաբանությամբ վերաբերում է

<sup>21</sup> Տե՛ս **К. Гемпель**, Мотивы и «охватывающие» законы в историческом объяснении, в сб.: Философия и методология истории, М., 1977, էջ 74:

<sup>22</sup> Տե՛ս **M. Scriven**, Truisms as the Grounds for Historical Explanations. In: Theories of History, III, Glencoe, 1959, էջ 46:

ոչ թե առանձին որևէ երևույթի, այլ միատեսակ կամ նման երևույթների ամբողջ դասին: Այդպիսի մեկնաբանության դեպքում հավանականության տեսությունը վերածվում է զանգվածային պատահական երևույթների քանակական օրինաչափությունների մասին գիտության, որտեղ պատահականությունը ոչ թե պարզապես հակադրվում է անհրաժեշտությանը, այլ դիտվում է որպես այդ անհրաժեշտության լրացման և դրսևորման ձև»<sup>21</sup>: Բացի այդ, վիճակագրական հավանականության մասին հարցը որոշվում է «մեծ թվերի օրենքով», որի կիրառման հիմքում ընկած է միատեսակ կրկնվող որոշակի պայմանների դեպքում ի հայտ եկող երևույթներին հավանական զնախատականի վերագրումը: Այդ զնախատականների հիման վրա կարող է կատարվել այնպիսի հավանականությամբ կանխատեսում, որը կարելի է համարել գրեթե հավաստի: Այն դեպքում, երբ հավանականությունը մոտենում է 1-ի (ասենք  $\approx 0,999$ , ինչպես վերը բերված օրինակում), ինդուկտիվ բացատրությունն իր հավաստիությամբ մոտենում է դեդուկտիվին: Սակայն, եթե դեդուկտիվ-նոմոլոգիական բացատրությունը սկզբում բացատրում է երևույթները, իսկ հետո արդեն կրկնակի բացատրում է, թե ինչու պետք էր սպասել դրանց առաջացմանը, ապա ինդուկտիվ հավանական բացատրությունը շրջում է հարաբերությունը. առաջին հերթին այն բացատրում է, թե ինչու պետք էր սպասել երևույթների առաջացմանը, և միայն երկրորդ հերթին բացատրում է, թե ինչու դրանք տեղի ունեցան. այն պատճառով հատկապես, որովհետև դրանք ունեին բարձր հավանականություն: Հետևաբար, ինդուկտիվ բացատրությունն արդարացնում է որոշակի սպասումներն ու կանխատեսումները<sup>22</sup>:

Այսպիսով, դեդուկտիվ-նոմոլոգիական և ինդուկտիվ բացատրությունները ունեն այն ընդհանուր գիծը, որ բացատրում են որոշակի երևույթ՝ ցույց տալով, որ որոշակի կոնկրետ պայմաններից ու ընդհանուր օրենքներից էլլելով՝ նրա առաջացումը կարելի է կանխատեսել (բառի տրամաբանական իմաստով) կամ դեդուկտիվ անհրաժեշտությամբ, կամ ինդուկտիվ հավանականությամբ: Այդ պատճառով բացատրության այս երկու տիպերն էլ լիովին բավարարում են, այսպես կոչված, բացատրության համարժեքության ընդհանուր պայմանին: Դա նշանակում է, որ միայն տվյալ պայմանի կատարման դեպքում երևույթի վերաբերյալ որևէ տեղեկություն կարելի է համարել նրա բանականորեն ընդունելի բացատրությունը<sup>23</sup>:

Ժամանակակից մեթոդաբանական գրականության մեջ արդեն տարբերակվում են դետերմինացիայի երկու տիպ, որոնցից մեկը կապվում է կանխատեսելիության գաղափարի հետ և համարվում է նախադետերմինացիա, իսկ մյուսը կապվում է գործողության ավարտից հետո, այսինքն՝ *ex post facto* իմաստավորման գաղափարի հետ և համարվում է հետդետերմինացիա<sup>24</sup>: Գիտական բացատրության մեթոդը, բնականաբար, պատկանում է դետերմինացիայի առաջին տիպին, քանի որ ուղղված է դեպի ապագա, այսինքն՝ կապված է կանխատեսման գաղափարի հետ, իսկ մեկնաբանության մեթոդը, քանի որ կանխատեսման հնարավորություն չի տալիս, բայց բացահայտելով օբյեկտի՝ այլ օբյեկտների հետ ունեցած կապերն ու հարաբերությունները՝ դրանց հաղորդում է նոր իմաստ կամ նշանակություն, դրանով իսկ կապվում է իմաստավորման գաղափարի հետ, հետևաբար կարելի է համարել հետդետերմինացիա:

Այսպիսով, գիտական բացատրության և մեկնաբանության մեթոդների տրամաբանական անգամ իսկ համաոտ վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե

<sup>21</sup> Г. И. Рузавин. Вероятность и детерминизм. В сб.: Философия и логика, М., 1974, с. 199.

<sup>22</sup> Տե՛ս Գ. Խ. фон Вригт, նշվ. աշխ., էջ 52:

<sup>23</sup> Տե՛ս Կ. Гемпель, նշվ. աշխ., էջ 75:

<sup>24</sup> Տե՛ս Գ. Խ. фон Вригт, նշվ. աշխ., էջ 189:



դրանց տրամաբանական կառուցվածքի նմանությունը թվացյալ է, ապա տարբերությունը, ընդհակառակը, շատ ավելի խորքային բնույթ ունի, քան կարող է թվալ առաջին հայացքից, մինչդեռ գիտական բացատրության և մեկնաբանության մեթոդների հետ կապված էպիստեմոլոգիական շատ հարցադրումներ անմիջականորեն կապված են կամ բխում են դրանց տրամաբանական կառուցվածքից:

Գիտական բացատրությունը և մեկնաբանությունը, լինելով գիտելիքի տեսական մակարդակին հատուկ մեթոդներ, գիտական հետազոտության գործընթացում ունեն որոշակի գործառույթներ: Դրանք, մասնավորապես, կարող են հանդես գալ նաև որպես հիմնավորում: Ե. Պ. Նիկիտինը հիմնավորում է համարում գիտակցության այնպիսի ընթացակարգը, որի ընթացքում երկու իդեալական օբյեկտների՝ հիմքի և հիմնավորվողի միջև այս կամ այն կապի հաստատման ճանապարհով երկրորդին հաղորդվում են առաջինի որոշ բնութագրություններ<sup>27</sup>: Փիլիսոփայական հանրագիտարանում հիմնավորումը սահմանվում է իբրև գիտելիքի տրամաբանական տարբեր ձևերը (պնդումներ, վարկածներ, տեսություններ), որպես գիտելիքի գիտական բաղադրիչ գնահատելու գործընթաց՝ գիտելիքի այդ համակարգի գործառույթներին, նպատակներին և խնդիրներին դրանց համապատասխանության տեսակետից<sup>28</sup>: Եթե Ե. Պ. Նիկիտինի բնորոշումը հիմնավորման վերաբերյալ ընդունենք իբրև սահմանում, ապա կարելի է ասել, որ այդպիսի սահմանումը չափազանց լայն կլինի, ուստի՝ նաև բավականաչափ անորոշ, իսկ փիլիսոփայական հանրագիտարանում բերված սահմանումը, ընդհակառակը, շատ նեղ է, քանի որ սահմանափակում է հիմնավորման ընթացակարգը գիտելիքի տրամաբանական ձևերով, այսինքն՝ պետք է ենթադրել, որ խոսքն այստեղ ոչ թե հիմնավորման մասին է ընդհանրապես, այլ տրամաբանական հիմնավորման մասին: Հետևաբար, հիմք ընդունելով այս երկու տեսակետները, կարելի է պնդել, որ գիտական բացատրությունը և մեկնաբանությունը կարող են դիտվել որպես հիմնավորում: Քանի որ և՛ գիտական բացատրությունը, և՛ մեկնաբանությունը իրենց էքսպլանանսներում արտահայտում են էքսպլանանդումի գոյության անհրաժեշտ պայմանները (իսկ գիտական բացատրությունը նաև բավարար պայմանները), ապա դրանով իսկ էքսպլանանդումին հաղորդում են գիտելիքի տվյալ համակարգի նկատմամբ անհրաժեշտության կարգավիճակ, այսինքն՝ ընդգծում են այն փաստը, որ այն գիտելիքի տվյալ համակարգի բաղադրիչն է և, իբրև այդպիսին, համապատասխանում է այդ համակարգի գործառույթներին, նպատակներին, խնդիրներին, հետևաբար դրանք կարող են որակվել որպես հիմնավորում: Տելեոլոգիական հեռանկար ունեցող մեկնաբանություններում էքսպլանանսին նույնպես անհրաժեշտության երանգ է հաղորդվում, բայց *ex post facto*՝ երբ գործողությունն արդեն կատարվել է, ուստի այն նույնպես կարող է որակվել որպես հիմնավորում: Սակայն, իբրև հիմնավորման ընթացակարգ ևս, գիտական բացատրությունը և մեկնաբանությունը միմյանցից խիստ տարբերվում են: Գիտական բացատրությունը, հանդիսանալով բովանդակային ապոֆիկտիկ գիտելիքի մասնավոր դեպք և օժտված լինելով տրամաբանական խստությամբ և ապացուցողականությամբ՝ իբրև հիմնավորում, ապահովում է գիտելիքի հավաստիության բավականաչափ բարձր աստիճան: Մինչդեռ մեկնաբանության տրամաբանական արտահայտությունը էմոիմենան է, որն Արիստոտելն անվանում է հոետորական սիլլոգիզմ<sup>29</sup>՝ դրանով իսկ, ըստ երևույթին, ընդգծելով այն հանգամանքը, որ որպես հիմնավորում էմոիմենան կարիք ունի արտատրամաբանական, այդ թվում նաև հոետորական հնարքների օգտագործման: Հետևաբար,

<sup>27</sup> Տե՛ս Ե. Պ. Никитин, Природа обоснования, М., 1981, էջ 27:

<sup>28</sup> Տե՛ս Обоснование, "Философская энциклопедия", т. 4, М., 1967, էջ 110:

<sup>29</sup> Տե՛ս Аристотель, նշվ. աշխ., էջ 530:

գիտական բացատրությունը և մեկնաբանությունը հանդես են գալիս որպես հիմնավորման տարրեր տարատեսակներ:

Այսպիսով, մեկնաբանության մեթոդի տրամաբանական արտահայտությունը էնտիմեման է, իսկ գիտական բացատրությունն ունի ապացուցողական սիլլոգիզմի ձև, և հենց այդպիսի տրամաբանական կառուցվածքից են բխում գիտական բացատրության և մեկնաբանության հետ կապված այնպիսի էպիստեմոլոգիական հարցեր, ինչպես գիտելիքի էմպիրիկ և տեսական մակարդակներին պատկանելիությունը, տեսական հիմնավորումը, մոր գիտելիքի կանխատեսման հնարավորությունը (անհնարինությունը), ստացվող գիտելիքի ճշտության և ճշմարտության գնահատումը և այլն, որոնց լուծումը հնարավոր է իրագործել գիտական բացատրության և մեկնաբանության մեթոդների փոխհարաբերության վերլուծության համատեքստում՝ դրանց համեմատական վերլուծության հիման վրա: Իհարկե, գիտական բացատրության և մեկնաբանության մեթոդների փոխհարաբերության հիմնահարցն այսքանով չի սահմանափակվում և կարիք ունի հետագա ավելի խոր ուսումնասիրության:

**С. В. ВАРТАНЯН - К вопросу о соотношении методов научного объяснения и истолкования.** - Работа посвящена рассмотрению логических аспектов соотношения между методами научного объяснения и истолкования. Особо подчеркивается то обстоятельство, что различие между ними носит более глубокий характер, чем кажется; делается вывод о том, что логической формой истолкования является энтимемма, в то время как научное объяснение имеет форму строгого доказательного силлогизма. И именно из подобного логического различия между научным объяснением и истолкованием вытекают многие связанные с ними важнейшие эпистемологические проблемы, частично обсуждаемые в статье.